



Քահանա Թոնի Ալամո
լուսանկար 1986

ԹՈՆԻ ԱԼԱՄՈՅԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ Չորացած Ոսկորները

Հեղինակ՝ Թոնի Ալամո

Աստված Հին Կտակարանի մարգարե Եզեկիելին մի տեսիլք ուղարկեց: Տեսիլքում նա չորացած ոսկորներով մի հովիտ տեսավ, որը մարմնավորում էր Իսրայելի և ամբողջ աշխարհի հոգևոր մահը: Տեսիլքը կանխագուշակում էր Քրիստոսի առաջին Գալուստը, նրա Ավետարանի քարոզչությունը և ի վերջո, բոլոր նրանց մահվանից առաջին հարությունը դեպի կյանք հավիտենական, ովքեր հավատում են «Տիրոջ խոսքին»¹:

Աստված ասաց Եզեկիելին. Մարդո՛ւ որդի, արդեօք կը կենդանանա՞ն այդ ոսկորները » (Կարո՞ղ են այս հոգեպես մահացածները կենդանանալ): Եզեկիելն ասաց.

«Տէ՛ր Աստուած, այդ դու գիտես »²: Աստված նորից խոսեց մարգարեի հետ, ասելով. «Մարգարեացի ր այդ ոսկորների վրայ եւ ասա՛ դրանց. «Չորացա՛ծ ոսկորներ, լսեցէ՛ք Տիրոջ պատգամները: Այսպէս է ասում Տեր Աստուած այդ ոսկորներին. 'Ահա ես ձեզ վրայ կենդանի շունչ եմ բերելու և դուք կենդանանալու եք»³:

Իսրայելը գիտեր, որ ամբողջովին ոչնչացել է որպէս ազգ⁴: Մինչ այսօր նրանք անհույս բաժանված են: Սակայն Աստված ասել էր Եզեկիելին, որ Նա կստեղծի նոր ժողովուրդ, ավելի վեհ, քան առաջին Իսրայելը, որ անվերջ մեղք էր գործում: Երկրորդ Իսրայելը կկազմվի աշխարհի բոլոր ազգերի մարդկանցից⁵, ընտրյալ հրեաների մասցորդներից և բազմաթիվ հեթանոսներից որոնք հյուսված են Ճշմարիտ Որթատնկի մեջ (Քրիստոսը)⁶: Վեհ և սուրբ ժողովուրդ կլինի՝ կազմված նրանցից, ովքեր կենդանացել են մեղսավոր անշունչ կյանքից դեպի հավիտենական կյանք⁷: Նրանք երբեք դուրս չեն գա Աստծո դեմ: Սա Քրիստոսի Հարության հզորության շնորհիվ առաջին հարությունն էր⁸:

1964 թվ-ին, Քրիստոսի Հարության միջոցով իմ առաջին առաջին հարությունից առաջ, ես, Բերնի Հոֆմանս, հայտնի որպէս Թոնի Ալամո, շատ լավ հայտնի էի որպէս մեղսավոր և անաստված, ինչպէս նաև բոլորովին զուրկ Աստծո մասին որևէ գիտելիքից: Ես գաղափար չունեի անգամ, որ Աստված գոյություն ունի: Աստծո Խոսքը ինձ

համար պատմածքների ու առասպելների նման մի բան էր, միևնույն ժամանակ ես չէի կարողանում հասկանալ մարդկանց, ովքեր հավատում էին Աստծո կամ նրա Որդու գոյությանը: Չէի կարողանում հասկանալ մարդկանց, ովքեր ասում էին, որ հավատում են Աստծուն, քանի որ նրանք բոլորը կեղծավոր էին: Նրանք նույնքան մեղքեր էին գործում, կամ միգուցե ավելի շատ, քան ես ինքս: Ես դա գիտեմ, քանի որ անընդհատ առնչվում էի նրանց հետ: Մենք բոլորս չորացած ոսկորների մի կույտ էինք: Չայրանում էի, եթե որևէ մեկը ինձ փորձում էր Քրիստոնյա դարձնել, քանի որ Աստվածաշունչը համարում էի պարզապես ժամանակի կորուստ: Այն կյանքը, որով ես ապրում էի, ինձ ժամանակ չէր թողնում հեքիաթների կամ խաղերի համար:

Մարքեթինգի շուկայում ես համար առաջինն էի համարվում: Պատասխանատու էի շատ աշխարհահռչակ երգիչների և դերասանների կարիերայի համար, ինչպէս նաև զբաղվում էի հայտնի ապրանքանիշերի գովազդով: Իմ ամենավատ մոդավանջներից մեկն այն էր, որ ինձ դարձրել են Քրիստոնյա և այն մարդկանցից մեկը, որոնք փողոցում Աստվածաշնչյան թեմաներով և Քրիստոսի մասին թուցիկներ են բաժանում, որ ապրում են ինչ-որ գետտոներում գործելու առաքելությամբ, Ավետարանը քարոզում և աղքատների համար անվճար ճաշարաններ կազմակերպում:

(Շարունակությունը՝ էջ 2)

1 Եզ 36:1, 4 2 Եզ 37:3, բնագիր Եբրայերեն. 3 Եզ 37:4-5 բնագիր Արամերեն 4 Եզ 37:11 5 Ծն 17:4-16, 22:18, 26:4, 46:3, 48:19, 49:10, Ելք 19:6, 32:10, Սղ 22:27, Ես 2:2, 38. 11:51-52, Գրծ 10:34-35, Եփ 1:10, Եբր 8:8-12, Ա.Պտ 2:9-10, 3յտ 5:9, 14:6 և այլն 6 Յհ 15:1, Հն11:17, 19, 23, 24, 3յտ 7:4 7 Ա.Պտ 2:9 8 Հն 15:12, Ա.Կր 15:15, 16, Կղ 2:12, 3:1, Ա.Թս 4:16, 3յտ 20:5-6,

(Շարունակությունը 1 էջից)

60-ականների կեսերին աշխարհը այնքան էլ լավը չէր թվում ինձ: Ես չէի սիրում թմրանյութեր ու չէի հավանում ոչ մարդկային բարոյական արժեքներով կեղտոտ մարդկանց: Նաև կողմ չէի հիփփիների շարժման գործունեությանը Հոլիվուդում, Սանսեթ Սթրիփում և ամբողջ աշխարհում: Իհարկե, ես ինքս սուրբ չէի: Ինձ չէր անհանգստացնում, թե ինչ էին անում մարդիկ, ինչպես նաև ինչ մեղքեր էին գործում, քանի դեռ նրանք չէին պարծենում դրանցով երեխաներով ընտանիքների առջև: Ինձ համար աշխարհը ավարտված էր, մահացած, չորացած, տհաճ ու դժգույն:⁹ Այլևս ոչինչ արժեք չունեւ: Կարծում եմ, այլ մարդիկ նույնպես դա գիտեին և թմրանյութ օգտագործելով փորձում էին փախչել իրականությունից: Եկեղեցիները կեղծավոր էին. թվում էր, բոլորը դա գիտեին: Ամբողջ աշխարհը ընկղմված էր իր մեղքերի և անօրինությունների մեջ:¹⁰ Աշխարհը չորացած ոսկորների մի հսկա հովիտ էր, ճիշտ այնպիսին այնպես, Եդեկիելն էր տեսել:¹¹

Հիսուսին հանդիպեցի շատ բնական կերպ Բենեդիկտի Հիլզի գրասենյակներից մեկում: Կարծում եմ, ոչ ոք չի կարող պատկերացնել, թե որքան սարսափած և միաժամանակ երջանիկ էի ես, երբ Աստված ապացուցեց ինձ, որ Ինքը և Իր Որդին իրական են և իսկապես գոյություն ունեն: Ես ոգևորվեցի, երբ զգացի Նրա աննկարագրելի Սուրբ Ոգին և լսեցի Նրա Հզոր Ձայնը, որը անցավ ամբողջ մարմնովս, կարծես ես մի գտիչ էի, որով բառերը շրջանառվում էին ետ ու առաջ:

Նրա ներկայությունը ջերմացնող և փառահեղ էր: Նրա Ոգին ուժեղ ազդեցություն ուներ ինձ վրա, կարծես Աստված իր հզոր ձեռքով բռնել էր ինձ: Նա ասաց ինձ. «Ոտքի կանգնիր և պատմիր այս սենյակում գտնվող բոլոր մարդկանց Տեր Հիսուս Քրիստոսի մասին, և այն մասին, որ Նա նորից ետ է գալու երկիր, հակառակ դեպքում դու անշուշտ կմեռնես»: Երբ Աստծո Ոգին եկավ այդ գրասենյակ և սկսեց իր ազդեցությունը ինձ վրա, ես հասկացա նրա անքակտելի և անվիճելի իմաստությունը:¹² Նա բոլոր ատոմների և մոլեկուլների մեջ էր: Նա օդում էր: Նա գիտեր ամեն ինչ անցյալի մասին և այն ամենի, ինչ կատարվելու է ապագայում:¹³ Ես լցվել էի ամոթով էի, քանի որ գիտեի. Նա գիտի այն ամենը, ինչ ես արել եմ կյանքում: Ապա Նա ինձ ցույց տվեց, որ Դրախտը և Դժոխքը իսկապես գոյություն ունեն: Ես գիտեի, թե որտեղ կհայտնվեմ, եթե չանեմ այն, ինչ Նա ինձ ասում էր. և դա հաստատ Դրախտը չէր լինի:

Չնայած նրան, որ դա ինձ սարսափեցնում էր¹⁴, բայց ես իսկապես հիանալի էի զգում՝ իմանալով, որ Աստված գոյություն ունի և կենդանի է, և որ այն ամենը ինչ ասել են մարգարեները և առաքյալները, ճշմարտություն է: Աստված բոլորովին չէր փոխվել այն ժամանակներից ի վեր, երբ ստեղծել էր երկինքը, երկիրը, տիեզերքը, և այն ամենը, ինչ որ կա դրանցում:¹⁵ Ես հենց միանգամից հասկացա, որ միշտ վախենալու, հիանալու, հարգելու, սիրելու և ծառայելու եմ Նրան: Ավելին, ես գիտակցում էի, որ այլևս ես ավելի քան պատրաստ եմ լինելու ապրելու, հետապնդելու և մեռնելու հանուն Նրա, և անելու եմ դա ուրախությամբ, իմ ամբողջ սրտով:¹⁶

Երբ Աստված դուրս թողեց ինձ այդ գրասենյակից, սկսեցի հարցեր տալ Նրան. «Ի՞նչ ես ուզում, որ Ես անեմ: Կանեմ ամենը, ինչ որ Դու ասես»: Պատասխան չստանալով, ես որոշեցի գնալ եկեղեցի: Ենթադրեցի, որ ամենամեծ եկեղեցին ամենալավն է, գնացի այնտեղ, բայց չգտա Նրան: Հետո գնացի մի քանի ուրիշ եկեղեցիներ, բայց այնտեղ էլ չգտա Նրան: Հետո սկսեցի գրքեր կարդալ, որոնց դարձերեսին երկար մորուքներով և կրոնական հագուստով, շատ աստվածապաշտ և իմաստուն տեսք ունեցող մարդիկ էին պատկերված, բայց ես գիտեի, որ գրքերը սխալ էին, քանի որ դրանց մեջ գրված էր, որ Աստծուց պետք չէ վախենալ¹⁷, որ Աստված մարդկանց առհասարակ չի վախեցնում, և որ կարող ես մեղք գործել ու չընկնել Դժոխք:¹⁸ Ինձ բոլորովին պետք չէր այդպիսի Աստված, ինձ պետք էր այնպիսի Մեկը, ումից իսկապես կվախենամ,¹⁹ Նրան, ով ցույց էր տվել ինձ Դրախտն և Դժոխքը, որ ստիպել էր ինձ անել բաներ, որոնք այլևս ոչ ոք ի վիճակի չէր ինձ ստիպել, ավելին, բաներ, որոնք ես չէի ուզել անել:

Ես երբեք չէի կարծում, որ ճշմարտությունը կարելի է Աստվածաշնչում գտնել, քանի որ այնքան շատ Աստվածաշնչեր կային չորս կողմս: Զգացել էի, որ եթե մեծամասնությունը որևէ բանի հետևում է, ուրեմն դա չի կարող իմաստալից լինել, քանի որ մարդկանց հիմար էի համարում: Վերջապես սկսեցի Աստվածաշունչ կարդալ և այնտեղ գտա փրկության ծրագիրը, ինչպես նաև դեպի հավիտենական կյանք տանող ուղու ցուցումները: Այդ ցուցումները սովորեցնում էին, թե ինչպես կարելի է հոգով աճել Հիսուսի մեջ և դառնալ նրա համար գլխավոր հոգիներ շահողը:²⁰

Երբ նոր սկսեցի կարդալ Աստվածաշունչը, զգացի Աստծո այն նույն ուժը, որը նա սկզբից գործադրում էր ինձ վրա Բեվեռլի Հիլզի այն գրասենյակում: Ապա Աստված ինձ Դրախտի և Դժոխքի այլ տեսիլքներ ցույց տվեց:²¹ Ես կանչեցի Աստծուն և խնդրեցի. «Տեր, մի ուղարկիր ինձ Դժոխք»: Հետո տեսա Դրախտը և երկնային հանգստություն զգացի:²² Չնայած, որ ես հոգևոր առումով դեռ կույր էի, մերկ և փոքր, ես

⁹ Մտ 13:39, գլխք. 24, Ա.Կր 15:24, Եբր 9:26, Ա.Պտ 4:7 ¹⁰ Եփ 2:1, 5, Կղ 2:13 ¹¹ Եզ 37:1 ¹² Թւ 24:16, Ա.Թզ 2:3, Յոք 21:22, Սղ 32:8, Առ 2:6, 3:20, 9:10, Ղկ 1:77, Հո 11:33, Ա.Կր 1:25, 2:16, 3:19, Բ.Կր 4:6 ¹³ Սղ 44:21, 94:11, Ես 46:9-10, Ա.Կր 3:20, Ա.Յհ 3:20, Յոք 21:6, 22:13 ¹⁴ Մտ 35:5, Ղկ 26:16, Յոք 31:23, Եր 32:21, Եզ 32:32, Բ.Կր 5:11 ¹⁵ Մտ 1:1, Սղ 3:6, Գրծ 4:24, Բ.Կր 5:11, Եբր 13:8 ¹⁶ Սղ 5:11, 35:19, Ես 51:11, 61:10, Յհ 16:33, Գրծ 2:28, 20:24, Հո 12:8, 15:13, Բ.Կր 8:12 ¹⁷ Մտ 22:12, Սղ 112:1, Առ 13:13, 14:16, 28:14, 31:30, Ժղ 7:18 ¹⁸ Առ 8:36, Եզ 18:2, 4, Յոք 19:20, 20:10, 14, 15, 21:8 ¹⁹ Մտ 2:17, 6:7, 9, 13, Եբր 20:5, 32:33, 34:7, Եզ 3:18, 18:20, Մտ 8:12, 22:13, Սր 16:16, Յոք 2:5, 16, 22-23, 3:3, 20:15 ²⁰ Յհ 4:35-36, 15:5, 8, 15-16, Յոք 14:18

ասացի Աստծուն, որ կցանկանամ ժառանգել կույր, մերկ և անկարևոր, եթե ես կարող էի դեռ զգալ այդ երկնային խաղաղությունը հավերժ: Մեկ անգամ էլ տեսա Դժոխքը և նորից Աստծուն աղաչեցի մեղքերիս ներում և քավություն: Հետո Հոր, Որդու և Սուրբ Հոգու ողջ ուժը զգացի իմ մահկանացու մարմնի մեջ:²³ Ի շնորհիվ իմ հավատի դեպի Քրիստոսը և այն արյունը, որ Նա զոհաբերեց ինձ համար, ի շնորհիվ Աստծո բառերի, որոնք ես լսեցի և որոնց հնազանդվեցի²⁴, ես զգացի, թե ինչպես բոլոր գործած մեղքերս մեկ առ մեկ դուրս եկան հոգուցս:²⁵ Այդ պահին ինձ մաքուր և անարատ զգացի:²⁶ Ինչ որ հիասքանչ բան կատարվեց ինձ հետ, և դա արեց Հիսուս Քրիստոսը, «Իսրայելի Սուրբը»:²⁷ Այնքան երջանիկ էի ազատված լինել մեղքերիցս, և պատկանել այդ ուժին, որը ետ էր պահում ինձ մեղք գործելուց, որ ցանկություն առաջացավ պատմել ամբողջ աշխարհին այս մասին, որպեսզի նրանք էլ ճանաչեն Նրան և հավիտենական կյանքի արժանանան:

Քրիստոսին ծառայելով 1964 թվ-ից, նույնիսկ հիմա ամեն անգամ Աստվածաշունչ կարդալիս դեռ զգում եմ, թե ինչպես է հոգևոր էությունը լցվում այդ մեռած ոսկորների մեջ: Աստված կարծես հոգևոր մկանային հյուսվածքներով պարուրել է այդ ժամանակին մեռած ոսկորները, պարզելով նրանց նոր մարմնի և մաշկի հոգևոր սպառազինություն: Աստծո ամեն խոսքը ավելի էր մեծացնում Քրիստոսի տեղը իմ սրտում: Ես դեռ զգում եմ, ինչպես է Սուրբ Հոգին շունչ ներշնչում իմ հոգու մեջ Աստծո ամեն բառի հետ միասին, և թե ինչպես է այն ինձ ուժ տալիս դիմակայել այն բոլոր կրակոտ նետերին, որ Սատանան ուղղել է դեպի ինձ տարիների ընթացքում: Ամեն օր ավելի պարզ

հասկանում եմ, որ «մենք բոլորս նվաճողներ ենք»²⁸ Հիսուս Քրիստոսի հետ և որ «լիարժեք ենք Նրա մեջ միասին»:²⁹ Նաև գիտեմ, որքան կարևոր է հետևել Քրիստոսի այն խոսքերին, որ Նա ասացի շարությունից առաջ ամպի վրա կանգնած. «Գնացեք դեպի աշխարհը և քարոզեք Ավետարանը ամեն արարածի»³⁰: (Քարոզիր ամեն չորացած ոսկորին, նրանց, որ հոգևոր մահ են ապրում, որ լսեն նրանք Աստծո խոսքը:³¹)

«Նա, որ հավատաց և մկրտվեց, կիրկվի, բայց նա, ով հավատաց, չի անիծվի»:³²

(Շարունակությունը՝ էջ 8)

28 Հո 8:37, Ա.Յհ 4:3-4 29 Կդ 2:10 30 Մր 16:15, Ղկ 14:23

Տոգո

Հիսուսի սիրյալ,

Մենք անչափ ուրաք ենք ձեր նամակը ստանալու կապացությամբ: Շատ երջանիկ ենք ձեր գրականությունը ստանալու համար: Աստված իրոք գործում է դրա միջոցով: Մենք արդեն մոտավորապես տասնհինգ հոգի ունենք, որ ընդունել են Հիսուսին՝ ձեր գրքայինների միջոցով և աղոթում ենք, որ Աստված առատորեն օրհնի ձեզ բոլորին:

Ինչ վերաբերվում է սկավառակներին, մենք դրանց կարիքը ունենք, ինչպես նաև Աստվածաշնչի օրինակների կարիքն ունենք հատկապես նորադարձների համար: Այս պահին մենք չենք կարող մեզ թույլ տալ գնել դրանք: Տոգոն շատ աղքատ երկիր է:

Կսպասենք ձեզանից սկավառակներին և մի քանի Աստվածաշնչերի՝ Զատկի ուխտագնացության համար:

Օրհնյալ եղեք Հիսուսի անունով, Ամեն Հենրի Զեյմս,

Լոմե, Տոգո

21 Ես 5:14, 14:9, Ղկ 16:22-31, Գրծ 7:55-56, Յոս 4:1-11, 14:10-11, 15:1-4, 20:10, 21:2-5, 10-27, 22:1-5 22 Հո 5:1, Եփ. 2:14, Փյա 4:7, Կդ 3:15, Ա.Թս 5:23, Բ.Թս 3:16 23 Ղ 26:11-12, Յհ 14:16, Ա.Կր 6:16, Ա.Պո 2:5, 1 Յհ 3:24 24 Մսբ 2:4, Մտ 17:20, Ղկ 7:50, Գրծ 20:21, 26:18, Հո 1:17, 3:28, 5:2, 10:17, 11:20, Գդ 2:16, 3:11, Եփ 2:8, 3:17, Եբր 10:38 25 Մր 14:24, Յհ 6:53, Գրծ 20:28, Հո 3:25, 5:9, Եփ 1:7, 2:13, Կդ 1:14, 20, Եբր 9:12, 14, 22, Ա.Պո 1:18-19, Յոս 1:5, 5:9 26 Եբր 10:19-22, Ա.Յհ 1:7, Յոս 1:5, 7:14 27 Սդ 89:18, Գրծ 3:13-14



Թոնի Ալամոյի Եկեղեցու անդամ Մ. Ս. բաժանում է Քահանա Ալամոյի տեղեկագրությունները – Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն

Քալիֆորնիա

Հարգելի քահանա Ալամո,

Գրում եմ ձեզ այս նամակը Սուրբ Հոգու ուժով, պայքարի սպառազինությամբ, Աստծո զենք ու զրահով (Եփ 6:10-17): Վերջերս, Սուրբ հոգու, հոգևոր աճի և Տիրոջ բանակի անդամներից մեկի հետ խոսելիս և նրա միջոցով որոշ ճշմարտություններ և գաղտնիքներ բացահայտվեցին: Ես գիտեի, որ Աստված պատրաստում է Իր ընտրյալներին, և ձեր հրապարակախոսներից մեկում մի էջ կարդացի: Պետք է ասեմ, որ Աստված ինձ ծանոթացրեց ձեր գրականության հետ իմ կյանքի շատ կարևոր պահի, երբ ինձ իսկապես հստակ ճշմարտություն էր հարկավոր: Շատ տպավորված եմ ձեր առաքելությամբ: Դուք մաքուր ճշմարտություն եք, ոչ համեմված շաքարով, որ պատմում եք ինձ մարգարեության քաղցր նրբությունների մասին: Խնդրում եմ, հաշվի առեք ինձ ձեր առաքելության մեջ, և ավելացրեք ինձ ձեր բաժանորդագրման ցանկի մեջ, որպեսզի ես կարողանամ աճել Սուրբ Հոգով՝ զինված Աստծո ճշմարտության սրով: Ես հիմա գտնվում եմ պետական բանտում, այնպես որ գրքերը մի ուղարկեք կոշտ կազմով գրքեր: Ես նաև ի վիճակի չեմ որևէ միջոցներ նվիրաբերել, բայց իմ աղոթքները ուղղված են ձեր գործավոր առաքելության ծաղկմանը և վերջնական հաստատմանը: Հարգանքներով,

Բ.Լ.

Քորբորան, Քալիֆորնիա

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդկաստանի Թոնի Ալամոյի Քրիստոնեական Առաքելություն եղբայրության կողմից ընդունեք մեր շնորհավորանքները և ողջույնները:

Ես ուրախ և շնորհակալ էի, երբ ստացա Սուրբ Աստվածաշունչն ու այլ գրականություն, ներառյալ Մեսիան: Աղոթքով, իմ եղբայրներն ու ես տարածում ենք փրկության ճշմարիտ ծրագիրը նրանց, ովքեր անգլերենին տիրապետում են, իսկ նրանց համար, ովքեր չեն տիրապետում անգլերենին և ապրում են գյուղերում, նաև փորձում ենք թարգմանել այս յուրահատուկ գրականությունը մեր մայրենի լեզվով: Մեծ թվով մարդիկ. ավտոբուսների և մեքենաների վարորդներ, ավագ դպրոցի, բժշկական և տեխնիկական բուհերի ուսանողներ, գործարանների բանվորներ և այլ աշխատակիցներ, ուսուցիչներ, և բոլոր նրանք, ովքեր մեծ հետաքրքրությամբ ընդունել են այս գրականությունը, օրինված են, քանի որ, այս գրականությունը պարզևս է փրկության ծրագիրը: Ձեր գրականության միջոցով շատերը մեր քաղաքում ընդունել են Քրիստոսին որպես իրենց անձնական փրկիչ: Խնդրում եմ, մի մոռացեք մեր առաքելությունը ձեր աղոթքներում: Հարգանքներով, Նրա խաղողի այգու ձեր հավերժ ծառա:

Քահանա Ն. Տ.

Ռամպաչոդավարամ Մանդալ, Հնդկաստան



Եղբայր Տ. Ր. բաժանում է Քահանա Ալամոյի դինամիկ, հոգիներ շահող գիրքը «Մեսիան» - Ռաջահմունդրի, Հնդկաստան

**Սա քաղվածք է Քահանա Ալամոյի «Մեսիան» գրքից
Ամենամեծ Հրաշքը՝ տպագրված տեսքով.**

Մեսիան

Արձանագրություն

Ինչպես ասում է Աստվածաշնչյան մարգարեությունը.

«ՆՐԱ մասին են վկայում բոլոր մարգարեները» (Գրծ 10:43)

«Գրքում գրված է Իմ մասին» (Սղ 40:7, Եբ 10:7).

(Բ) Եսայի 53

(9) Մեսիայի ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ՄԵՐ ՄԵՂՔԵՐԻ ՔԱՎՈՒԹՅԱՆ, Եսայի 53:4-6, 8, 10-12

Եհովան «նրա՛ն մատնեց մեր մեղքերի համար (Ես53:6): Մեսիան Աստվածային Փրկիչն էր, որը իր վրա ամբողջ մարդկության փոխարեն ուղղվեցին մեղադրանքների նետերը: Որքան հրաշալի է Աստծո շնորհը, որ Քրիստոսի միջոցով քավեց մեր մեղքերը: Եւ այսպիսով, խաչը դարձավ միաժամանակ և Քրիստոսի ստորացումը և մեծագույն փառքը, պարզելով փրկություն ամբողջ մարդկությանը:

Երբ Տեր Հիսուսը եկավ, Նա ի կատար ածեց բոլոր մեսսիական մարգարեությունները և իր կյանքը տվեց խաչի վրա. «Նա, որ մեր մեղքերը Իր մարմնով բարձրացրեց խաչափայտի վրայ » (Ա.Պո 2:25)

(10) Մեսիան Իր իսկ Կամքով կտառապի և չի դժգոհի, Եսայի 53:7.

«Ու Նա վշտից իր բերանն անգամ չի բացում: Ինչպես ոչխար՝ Նա մորթուելու տարուեց, եւ ինչպես գառ՝

անմոռնչ կանգնած է խուզողի առաջև Նրա նման Իր բերանը չի բացում»:

Այլ տառապյալներ սովորաբար տրտնջում և բողբոջում են, հատկապես, երբ նրանք անհիմա են մեղադրված, բայց ոչ Մեսիան: Նա ինքնակամ ընդունեց Իրեն հանձնարարված «մեղքերի ընդունման» առաջադրանքը և մաքու պես գնաց գոհողության: Մեսիան վսեմ և վեհանձն լուրջամբ համբերեց մինչև վերջ, քանի որ Եհովան այդպես էր կամենում: Եւ այստեղ է, որ մենք ականատես ենք լինում անսահման սիրո առեղծվածին:

Նոր Կտակարանում, երբ Հիսուս Քրիստոսը ծեծվեց, անհիմա մեղադրվեց, հետապնդվեց, վատ վերաբերմունքի արժանացավ, երբ նրա վրա թեքեցին, ծաղրեցին, նրան քարշ տվեցին, խարազանեցին և խաչեցին, չլսվեց ոչ տրտնջանք, ոչ մեղադրանք Իր տանջողների հասցեին, ոչ բողբոջ, այլ լսվեց միայն աղոթք:

Երբ Հիսուսի դեմ շատ սուտ վկաներ հայտնվեցին, քահանայապետը ասաց. «Պատասխան չե՞ս տալիս ... Եւ Յիսուս լուռ էր մնում » (Մտ 26:59-63):

Ահա թե ինչպես էր Հիսուսը աղոթում, երբ տառապում էր խաչման տանջանքներից. «Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետեւ չգիտեն, թե ինչ են անում» (Ղկ 23:34):

Այդ ամբողջը այնքան անսովոր է, այնքան հակառակ բնության և մարդկության պատմության փորձին, որ որևէ մեկը չի կարող չզարմանալ և չվախենալ տարօրինակ մարգարեությունից, և դրա էլ ավելի հուշագրավ իրականացմամբ:

(11) Երբ Մեսիան դուրս բերվեց բանտից, Նա չունեք ՈՉ ՓԱՍՏԱԲԱՆ, որ պաշտպաներ Նրան, ոչ էլ ընկեր, որ հայտարարեր Նրա անմեղության մասին, Եսայի 53:8

«Խոնարհության շնորհիւ նրա դատաստանը վերացաւ, եւ նրա ազգատոհմի մասին ո՞վ պիտի պատմի»:

Միներդրի՞նք սովորություն ունենք. «դատավարություն հանուն կյանքի», այն թույլ էր տալիս ցանկացած մեկին,

1 Աստվածային Հեղինակը անհնարին է դարձնում յուրաքանչյուր սրամտություն կամ ուսուցում վերացնելու ուրիշ փոխարեն մեղքերի քավությունն այս կտորից ներկայացնելով այն այնքան հաճախ, և այնքան տարբեր և միաժամանակ նույն ձևերով, որ նա, ով հաջողության է հասնում մի տեղում, ստիպված է հանդիպել այն այլուր:



Մեր քաանչորսժամյա աղոթքից և տեղեկատվական գծից.

Զանգահարեց Դ. Ռ – ն ՄՔԱլիստերի Գրադարանից, Ֆուլլեր Հոգևոր Ճեմարանից, որ Փասադենայում է, Քալիֆորնիա, և ասաց, որ գետնին գցած մի քանի նամակ է գտել և կարդացել է դրանց: Նա ասաց, որ դրանք շատ են դուր եկել իրեն և խնդրում է դրանք տեղադրել բաժանորդագրման ցանկի մեջ: Նա ասաց մեզ, որ խնդրում է ուղարկել իրեն Քահանա Ալամոյի գրած բոլոր թերթերը և այլ գրականություն: Նա ուզում էր հավաքել Քահանա Ալամոյի գրականության հավաքածու, որպեսզի ապագայում հետազոտողները կարողանան դրանից օգտվել գրադարանում և ավելին իմանան Աստծո Խոսքի և Քահանա Ալամոյի մասին: Նա շատ ոգևորված էր այս մտքով: Նա ասաց, որ ուրախ կլինի իր գրապահարաններից մեկը ամբողջովին լցնել Քահանա Ալամոյի գրականությամբ, և, որ Քահանան ամեն ինչ պատմում է հենց այնպես, ինչպես որ իրականում կա:

Քահանա Մայք Օմքասեզուն իր մի քանի ժողովակիցների հետ միասին ստանում է Քահանա Ալամոյի հոգիներ շահող գրականությունը և Թագավոր Ջեյմսի Աստվածաշնչի տարբերակներ – Մուլեյա, Նիգերիա

որ որևէ բան գիտեր մեղադրալի օգտին, դուրս գալ և հայտարարել դրա մասին: Մա տեղի չունեցած Հիսուս Նագովրեցու դատավարության ժամանակ, ավելին, ամբողջ ընթացքը, ծաղրանքները արագացված դատավարության ընթացքում Մինեդրիոնի խորհրդի առջև, խիստ հակասում էին կանոնակարգերին, արդարության և ճշմարտության կանոններին:

Հիսուսը միայնակ և անպաշտպան հայտնվեց կոռումպացված Հրեական հիերարխիայի և այն ժամանակների ամենահզոր Հեթանոսական ուժի ներկայացուցիչների առջև: Որևէ մեկը չկամեցավ կիսել ՆՐԱ բաժինը: Հուդան դավաճանեց Նրան, Պետրոսը երդվեց և հերքեց, որ գիտի Նրան, իսկ մյուս աշակերտները «թողեցին Նրան ու փախան» (Մաթ. 26:56): Այն կանայք, որոնք Նրա առաքելության ընթացքում ծառայում էին Նրան, «կանգնած հեռուից նայում էին», երբ Նրան խաչեցին (Մտ 27:55): Այն ժամանակ, երբ Նա ամենից շատ կարիք ուներ օգնության, բռնացիորեն ասված, ՈՉ ՄԵԿ ՉԿԱՆԳՆԵՑ ՆՐԱ ԿՈՂՔԻՆ: Ավելի ուշ, իհարկե, տառապանքով լի ժամեր անց, Նրա Մայրը, և մի քանի հավատացյալ կանայք և իր Միբելի աշակերտ Հովհաննեսը «մոտեցան խաչին», բայց Նրա դատավարության ընթացքում և խաչման առաջին ժամերին Նա մենակ էր, բոլորովին մենակ: Երբեք մարդկային պատմության ընթացքում որևէ մեկը այնքան լքված չի եղել իր ընկերների և սիրեցյալների կողմից, ինչպես Հիսուսն էր լքված:

Հիսուսը ձերբակալված էր, ՈՉ համապատասխան պաշտոնյաների կողմից, այլ ամբոխի. «քահանայապետների և ժողովրդի ծերերի բազում

ամբոխ՝ սրերով ու մահակներով» (Մտ 26:47): Նույնիսկ Հիսուսը արձագանքեց Իր նկատմամբ անհետևողական վերաբերմունքին. «Սրերով եւ մահակներով իմ դէմ էք ելել բռնելու ինձ իբրեւ մի աւագակի: Միշտ ձեզ մօտ, տաճարում նստում էի եւ ուսուցանում, ու ինձ չբռնեցիք. բայց այս բոլորը եղաւ, որպէսզի մարգարէների Գրուածքները կատարուեն» (Մտ 26:55-56):

Մուտ վկաները կաշառվել էին Նրա դեմ վկայություն տալու համար, «որպեսզի նրան սպանեն » (Մտ 26:59), Նրան դատում էին գիշերով, ինչը անօրինական էր:

Հռոմեական Դատարանում, երբ Պիղատոսը գուր պատճառներ էր փնտրում Նրան արդարացի դատելու համար, հարցրեց ամբոխին. «Ի՞նչ չար բան արեց»: Միակ պատասխանը, որ նա ստացավ անհիմա գոռգոռոցներ էին և պահանջներ, նրանց ղեկավարների կողմից հրահրված. «Թող խաչուի թող խաչուի » (Մտ 27:23): Ապա, երբ Պիղատոսը տեսավ, որ բանական խոսքերը և արդարությունը չի գերակշռում, և ավելի բարձր աղմուկ է բարձրանում, նա «ձեռքերը լվաց» և շրջվեց Հիսուսին մեջքով, այսպիսով թուլատրելով ամբոխին խաչել Նրան: (Մտ 27:22-26): Մա պատմության ամենաանարդար դատավարությունն էր:

Սակայն, Հիսուսի անմեղությունը ոչ միայն ակնհայտ էր Պիղատոսի համար. «Ես Նրա ոչ մի հանցանք չեմ գտնում» (Յհ 19:6), այլև կանխագուշակված էր Մեսիայի հին մարգարեություններում. «Նա անօրէնութիւն չգործեց, եւ նենգութիւնը տեղ չգտաւ Նրա բերանում» (Ես. 53:9):

Շարունակությունը լրատուի հմր 06100

Տանգանիա

Հարգելի քահանա Ալամո, իմ սիրելի և Աստծո կողմից ուղարկված Քահանա:

Թող որ Հոր և մեր Տեր Հիսուս Քրիստոսը ձեր և ձեր առաքելությանը ողորմածություն և խաղաղություն շնորհի: Ես ավետարանչական համայնքի անդամ եմ Մուսոմայում, Տանգանիա և շնորհակալ եմ Աստծուց, որին ծառայում եմ 1994 թ-ից: Ես աշխատում եմ հանուն ամբողջ երկրում, և նույնիսկ Տանգանիայից դուրս իմ առաքելության տարածման: Քահանա, ես երբեք չեմ լսել ձեր ձայնը և քարոզչությունը, ոչ էլ տեսել եմ ձեր դեմքը, բայց ձեր գրականության միջոցով, որը ստանում եմ, կարդացել եմ ձեր՝ արտակարգ միջազգային բանախոսի կողմից գրված բազմաթիվ հիասքանչ ուղերձները, այնպիսիք, ինչպիսին են «Չորացած ոսկորները», «Մեսիան և «Աստծո ֆերման»: Այդ գրականության միջոցով և հասկացել եմ ձեր ներկա և ապագա մտահոգությունները եկեղեցու վերաբերյալ, որ Հիսուսի մարմինն է: Ես և Աստծո գործով լցված իմ գործընկերները և նորադարձները, ովքեր Հիսուսին ընդունել են ձեր գրականության շնորհիվ, ստեղծել ենք մի եղբայրություն, որ կոչել ենք Հավատացյալ Համայնք Եկեղեցի (ՀՀԵ): Մենք ուզում ենք ձեր առաքելությունը տարածել Արևելյան Աֆրիկայում, հատկապես Տանգանիայում, նաև ջանում ենք զարգացնել և տարածել այն հեռավոր գյուղերում: Մենք Ձեր օգնության կարիքն ունենք, քահանա: Շատ լավ կլիներ, եթե կարողանայիք տրամադրել մեզ բարձրախոսներ, գեներատոր, ինչպես նաև Աստվածաշնչեր նորադարձների համար և ուսուցողական գրականություն մեր ավետարանչական եկեղեցու և իսկական ավետարանականության տարածման գործում: Այսպիսով, Աստծո օրհնությունը մեծ կլինի ձեզ համար: Թող Աստված օրհնի ձեր առաքելությունը և հարստացնի Ձեր հոգևոր կյանքը Ձեր բոլոր բարի գործերի համար: Մենք գնահատում ենք Ձեր գործը և անհամբեր սպասում ենք Ձեր դրական պատասխանին:

Ձերն՝ Հիսուսի անունով,

Օ. Ե. Մ.

Տանգանիա, Արևելյան Աֆրիկա



Ալամոյի Եկեղեցի Անգանգ
www.alamoministries.com

Զամբիա

Հարգելի Քահանա Թոնի Ալամո,

Շատ երջանիկ եմ, որ գրում եմ այս նամակը: Ի՞նչպես եք, Քահանա: Հուսամ, որ Ամենակարող Աստծո կամոք, ձեզ հետ ամեն ինչ լավ է: Կարդացել եմ ձեր Աշխարհի Թերթը, «Ղեկավարները և առակները», ինձ հրաշքով բախտ վիճակվեց ստանալ այս հնարավորությունը: Այն կարդալուց հետո ես օրհնված էի ինձ զգում և մեծ ցանկություն հայտնվեց գրելու ձեզ: Շնորհակալություն եմ հայտնում ձեզ այդ հրաշալի ուղերձների համար, որոնք հասնում են նույնիսկ մոլորվածներին և չփրկվածներին՝ այնպես, որ Քրիստոսը, հնարավոր է, հայտնվի իրենց կյանքում: Ձեր գրականության միջոցով Քրիստոսը հասնում է մարդկանց, և հեռացնում է նրանց Սատանայից: Թող Աստված օրհնի ձեզ տնտեսապես, ֆիզիկապես և հոգեպես:

Քահանա, ես երիտասարդ կին եմ, արդեն հինգ տարի է, ինչ ամուսնացած եմ: Հիսուսին նվիրեցի կյանքս երկու տարի առաջ, և Տերը շատ ողորմած գտնվեց իմ հանդեպ: Ես ուզում եմ ճշմարիտ ավետարանը քարոզել ուրիշներին: Լինելով աֆրիկացի կին, մենք դարձրով կարծես գնդանի մեջ ենք պահվել, ավանդական առասպելների պատճառով, և ահա թե ինչու ես ուզում եմ նվիրել ինձ Տիրոջը: Քահանա, խնդրում եմ ձեզնից Աստվածաշունչ, գրքեր, տեղեկագրեր, Աստծո ուղերձները ձայներիզների վրա, և որքան հնարավոր է շատ գրականություն, որոնք ինձ կօգնեն քարոզելու կորստյալ հոգիներին: Վերջապես, ուզում եմ խնդրել Աստվածաշունչը ուսուճասիրելու համար որոշ նյութեր և երգերի ձայներիզներ:

Աստծո անունով,

Լ. Մ.

Իսկա, Զամբիա

Մեքսիկա

Մեծարգո Քահանա Ալամո,

Ձեր գրականությունը հասել է նաև ինձ և այնտեղ, որտեղ ես գտնվում եմ, այն պարունակում է ուղերձներ և վկայություններ աշխարհի տարբեր ծայրերից: Անկասկած, Աստված օգտագործում է Ձեզ փրկության Իր ուղերձները յուրաքանչյուրիս հասցնելու համար: Մարիխուանայի տեղափոխման մեղադրանքով ես բանտում եմ արդեն յոթուկես տարի է: Վերջին երկու տարիների ընթացքում, որ այստեղ եմ Աստված հայտնվեց իմ թշվառ կյանքում շատ արտասովոր կերպով: Հույսով եմ, որ ազատ կարձակվեմ այս տարի, ես ուզում եմ իմանալ, արդյոք ք կարող եք ինձ ուղարկել ձեր գիրքը, Մեսիան և այլ գրականություն, որը ինձ կօգնի փոխակերպել իմ որդիներին:

Մ.Ա.

Մոնկլովա, Կոահուիլա, Մեքսիկա

Գանա

Սիրելի և բարի Քահանա,

Այնքան ոգևորված եմ, որ ուղարկել եք ինձ ձեր տեղեկագրերը: Տեղեկագրերով ծանրոցը ստացա անցյալ շաբաթ: Աստծո սիրելի ծառա, մարդիկ այնպիսի գոհունակությամբ էին կարդում դրանք: Գյուղի մեր ընկերները, որոնց հետ մենք միշտ կիսում ենք մեր նվերները և որոնց այցելում ենք միասին աղոթելու համար, անհամբերությամբ սպասում էին դրանց, ինչպես նաև որոշ քնած հոգիներ արթնացան եղբայրների նամակները կարդալուց հետո: Այնքան ուրախ ենք և խնդրում ենք մեզ ավելացնել ձեր բաժանորդագրման ցանկի մեջ, որպեսզի այսուհետ մեզ էլ ուղարկեք ավետարանչական նյութեր: Մեզ հարկավոր են մի քանի Աստվածաշնչեր, ձեր գրականությունը և ուրախ կլինենք ձեր եկեղեցուց ուսմունքներ ստանալ: Մենք աղոթում ենք ձեզ համար, Աստծո սիրված որդին, Սիոն, և այն բոլորի համար, որքեր աշխատում են ձեզ հետ: Թող Աստված առատորեն օրհնի ձեզ: Ամենից առաջ, և բոլոր հնարավոր միջոցներով, աղոթեք մեզ համար: Աղոթքը շարժում է Ամենագոր Աստծո Հզոր Ձեռքը: Առանց աղոթքի, մենք ուղակի «մանում ենք մեր անիփսերը»: Խնդրում ենք, աղոթեք մեր ուսանող կամավորների համար, ովքեր գնում են հեռավոր գյուղեր և սարեր են բարձրանում՝ Աստծո գործը անելու: Աղոթեք, որ Աստված նրանք խիզախություն պարգևի, հավատք և սեր:

Թող Աստծո Ոգին լինի Ձեր ուղեցույցը և առաջնորդը: Թող որ առատորեն օրհնի ձեզ: Մենք աղոթում ենք Աստծուն Ձեր երկար կյանքի, խաղաղության և բարգավաճման համար:

Ձեզ Քրիստոսի սիրով սիրող,

Ա. Ս.

Աքրա, Գանա

Հարգելի Քահանա Թոմի,

Շնորհակալ եմ ինձ ձեր գիրքը՝ Մեսիան, և տասը տեղեկագրերը ուղարկելու համար: Նյութերը հոգևոր իմացություն նվիրեցին և իրազեկվածություն և նոր նվիրվածություն դեպի Աստծո գործը: Մի քանի տեղեկագրերը ես տվեցի քրիստոնյա ընկերներին, ովքեր մեծացել են հավատքից հեռու և, երբ նրանց այցելեցի, նրանք բոլորը մեծ ուրախություն էին ապրում, քանի որ բոլորը արթնացել էին Հոգով և լավ են հիմա, ի շնորհիվ Ձեր տեղեկագրերի: Այդ մարդիկ կարիք ունեն տեղեկագրերի, այդ պատճառով խնդրում եմ Ձեր ուղարկել ինձ ևս հարյուր հիսուն տեղեկագիր և մի քանի Աստվածաշունչ նորադարձների համար, որոնք իսկապես դրանց կարիքն ունեն: Շատ շնորհակալ եմ, եթե դրանք ուղարկեք ինձ: Շնորհակալ եմ նաև, որ առատորեն ուսուցանում եք Աստծո Խոսքը, որ այդքան հավատքով տարածում եք: Թող Ամենակարող Աստված օրհնի Ձեր: Հավատքը սարեր է շարժում:

Ձեր դուստրը՝ Հիսուսի անունով,

S. O.

Կումասի, Գանա

Հարգելի Քահանա,

Ուղարկում եմ Ձեր ողջույներս Գանայից: Ձեր գիրքը, Մեսիան, կարդալուց հետո, ես անչափ ոգևորված եմ ձեզ հաղորդել, որ վերջապես ընդունել եմ Հիսուս Քրիստոսին որպես իմ անձնական Փրկչի և որ Նա եկավ և մահացավ քաջի վրա հանուն ինձ: Մրանից առաջ ես ապրում էի առանց Աստծուն ճանաչելու, առանց ճանաչելու նրա Որդուն, Մեսիային, բայց Ձեր գրականությունը կարդալուց հետո ես հասկացա, որ մոլորված էի, իսկ հիմա փրկված եմ, որ խավարի մեջ

էի, բայց Տեր Աստված ինձ բերեց դեպի լույսը: Այսպիսով, ես նորածին Քրիստոնյա եմ և ապրող Աստծո որդին: Հիմա ես Աստվածաշունչ չունեմ, և եթե հնարավոր է, խնդրում եմ ինձ ուղարկել մեկ Աստվածաշունչ, ինչպես նաև գրքույքը՝ Մեսիան: Եթե որևէ այլ գիրք կարողանաք ուղարկել, որ ինձ կօգնի ավելի լավ ճանաչել Աստծուն, շնորհակալ կլինեմ: Ներկայումս ես հաճախում եմ Կոֆորիդուայի Հոգեգալստական եկեղեցին: Թող Աստված առատորեն օրհնի Ձեր այն աշխատանքի համար, որ անում եք:

Հարգանքներով,

Դ.Ն.

Կոֆորիդուա, Գանա.

Նիգերիա

Հարգելի Քահանա,

Ողջուններս Տեր Հիսուս Քրիստոսի անունով: Ամեն: Վերջին տեղեկագրերն, որն ուղարկել եք ինձ արդեն տարածված են, և ես շատ զարմացած եմ այն փոփոխություններով, որ կատարվում են մարդկանց կյանքերում դրանց շնորհիվ, և նրանք խոստանում են ծառայել Աստծուն իրենց ամբողջ սրտով, իսկ մի քանիսը նույնիսկ ուզում են գրել ձեզ: Ես ուզում եմ խնդրել Մեսիա գրքի ևս քսանհինգ օրինակ, հարյուր հիսուն օրինակ այլ տեղեկագրերի, մի քանի Աստվածաշունչ և որևէ այլ գրականություն, որոնք կօգնեն ինձ իմ ավետարանչական աշխատանքում, ինչպես նաև իմ ընկերներին, նրանց ընտանիքներին և բոլոր հետաքրքրված մարդկանց, ովքեր ուզում են ավելի իմանալ Տեր Հիսուս Քրիստոսի մասին: Ես իսկապես ուզում եմ ձեր առաքելության անդամը լինել այստեղ, Նիգերիայում: Ուզում եմ իմանալ, ինչե՞ հարկավոր դրա համար: Ես տեսել եմ Աստծո ձեռքը Ձեր և Ձեր եկեղեցու վրա, և ուզում եմ մասը կազմել այն օծման և շնորհի, որ Ձեր և Ձեր եկեղեցու վրա է: Անհամբերությամբ կսպասեմ ձեր պատասխանին: Հարգանքներով՝ Տիրոջ անունով,

Փ. Մ.

Փոքր Հարբուրտ, Նիգերիա

ԹՈՒՆԻ ԱՆՍՈՒՅԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(Շարունակությունն էջից 3)

Եթե դուք ինձ նման եք և չեք ուզում անիծված լինել, այլ ուզում եք փրկվել, ապա այսպես աղոթեք Աստծուն.

Իմ ՏԵՐ, իմ ԱՍՏՎԱԾ, մեղքերիս քավություն եմ խնդրում հոգուս համար, ես, մեղսավորս:³³ Հավատում եմ, որ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ ապրող ԱՍՏՈՆ ՈՐԴԻՆ է:³⁴ Հավատում եմ, որ ՆԱ մահացավ խաչի վրա և ԻՐ անգին արյունը թափեց իմ գործած բոլոր մեղքերի քավության համար:³⁵ Հավատում եմ, որ ԱՍՏՎԱԾ իր ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ուժի շնորհիվ կյանքի բերեց ՀԻՍՈՒՄԻՆ³⁶, և որ ՀԻՍՈՒՍԸ նստում է ԱՍՏՈՆ աջ կողմում և այս պահին լսում է իմ մեղքերի խոստովանությունը և այս աղոթքը:³⁷ ՏԵՐ ՀԻՍՈՒՄ, ես իմ սրտի դուռը բացում եմ և հրավիրում եմ ՔԵԶ իմ սրտի մեջ:³⁸ Մաքրիր իմ բոլոր մեղքերը ՔՈ անգին արյունով, որ ԴՈՒ թափեցիր խաչի վրա իմ փոխարեն Գողգոթայում:³⁹ ԴՈՒ չես հեռացնի ինձ, ՏԵՐ ՀԻՍՈՒՄ, ԴՈՒ կներես իմ մեղքերը և կփրկես իմ հոգին: Ես գիտեմ, որովհետև ՔՈ ԽՈՍՔԸ, Աստվածաշունչն է այդպես ասում:⁴⁰ ԱՍՏՈՆ ԽՈՍՔՆ ասում է, որ ԴՈՒ ոչ ոքից երես չես թեքի, այդ թվում և ինձնից:⁴¹ Հետևաբար, ես գիտեմ, որ ԴՈՒ լսել ես ինձ, և ԴՈՒ պատասխանել ես ինձ, և ես գիտեմ, որ փրկված եմ:⁴² Ես շնորհակալ եմ ՔԵԶԱՆԻՑ, ՏԵՐ ՀԻՍՈՒՄ, իմ հոգին փրկելու համար, և ես ցույց կտամ իմ շնորհակալությունը հետևելով ՔՈ հրամաններին և այլևս մեղք չգործելով:⁴³

Փրկությունից հետո, ՀԻՍՈՒՍԸ պատվիրեց մկրտություն անցնել, ամբողջովին ընկղմվել ջրի մեջ հանուն ՀՈՐ, և ՈՐԴՎՈ և ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ:⁴⁴ Պետք

է ջանասիրաբար ուսումնասիրել ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ (Հին և Նոր կտակարանների) Եբրայերեն և հունարեն բնօրինակների թարգմանությունը և անել այն ամենը, ինչ այնտեղ ասված է մինչև քո վերջին օրը:⁴⁵

ԱՍՏՎԱԾ ուզում է, որ դու պատմես քո փրկության մասին մյուսներին: Դու կարող ես դառնալ Քահանա Թոնի Ալամոյի Ավետարանչական գրականության տարածողը: Մենք անվճար կուղարկենք քեզ այդ գրականությունը: Ավելի շատ տեղեկատվություն ստանալու համար զանգահարեք կամ էլեկտրոնային նամակ ուղարկեք մեզ: Եվ տարածեք այդ ուղերձները:

Եթե ուզում եք, որ աշխարհը փրկվի, ինչպես ՀԻՍՈՒՄՆ է պատվիրում, ապա մի կողոպտեք ԱՍՏՈՒՆ, ԻՐ տասանորդները: Աստված ասում է. «Մի՞ թե մարդը կկողոպտի ԱՍՏՈՒՆ. Իսկ դուք կողոպտում եք ԻՆՁ: Բայց դուք ասում եք. «ՔԵԶՆԻՑ ի՞նչ ենք գողացել: Տասանորդներն ու նվիրաբերությունները: Անեծքով անիծված եք, քանի որ կողոպտում եք ԻՆՁ, ամբողջ ազգը և [նույնիսկ ամբողջ աշխարհը]: Բոլոր տասանորդները [համախառն եկամուտի 10%-ը] ամբար բերեք, որպեսզի ՏԱՆՍ [փրկված հոգիները] մեջ ուտելիք լինի [հոգևոր ուտելիք] և ապացուցեք ԻՆՁ այդպես, ասում է ՏԵՐԵՐԻ ՏԵՐԸ: Եթե չբացեմ Դրախտի պատուհանները ձեզ համար և օրհնություն չթափեմ ձեզ վրա, ուրեմն դուք վայր չեք ունենա դրանք ստանալու համար: Հանուն ձեզ կհանդիմանեմ ժառանգության, որ նա այլևս չավերի ձեր պտուղը, և ձեր այգու որթնատունկը անպտուղ չի լինի, ասում է ՏԵՐԵՐԻ ՏԵՐԸ: Բոլոր ազգերը երանի կտան ձեզ և դուք ցանկալի երկիր կդառնաք, ասում է ՏԵՐԵՐԻ ՏԵՐԸ» (Մաղաքիա 3:8-12):

31 Բ.Թազ 20:16, Ես 1:10, Եր 2:4, Եզ 37:4 32 Մր 16:16, Բ.Թս 2:12 33 Սղ 51:5, Հո 3:10-12, 23 34 Մտ 26:63-64, 27:54, Ղկ 1:30-33, Յհ 9:35-37, Հո 1:3-4 35 Գրծ 4:12, 20:28, Հո 3:25, Ա.Յհ 1:7, Յլտ 5:9 36 Սղ 16:9-10, Մտ 28:5-7, Սրկ 16:9, 12, 14, Յհ 2:19, 21, 10:17-18, 11:25, Գրծ 2:24, 3:15, Հո 8:11, Ա.Կրկնք 15:3-7 37 Ղկ 22:69, Գրծ 2:25-36, Եբր 10:12-13 38 Ա.Կր 3:16, Յլտ 3:20 39 Եփ 2:13-22, Եբր 9:22, 13:12, 20-21, Ա.Յհ 1:7, Յլտ 1:5, 7:14 40 Մտ 26:28, Գրծ 2:21, 4:12, Եփ 1:7, Կղ 1:14 41 Մտ 21:22, Յհ 6:35, 37-40, Հո 10:13 42 Եբր 11:6 43 Յհ 5:14, 8:11, Հո 6:4, Ա.Կր 15:10, Յլտ 7:14, 22:14 44 Մտ 28:18-20, Յհ 3:5, Գրծ 2:38, 19:3-5 45 Բ.Օր 4:29, 13:4, 26:16, Ես 1:8, 22:5, Բ.Տմ 2:15, 3:14-17, Յլ 1:22-25, Յլտ 3:18

Խնդրում ենք, կապնվեք մեզ հետ հավելյալ տեղեկատվություն և այլ հետաքրքրող թեմաների համար:

Tony Alamo, World Pastor, Tony Alamo Christian Ministries Worldwide • P.O. Box 2948, Hollywood, CA 90078

Քսանչորսժամյա հեռարձակում և տեղեկատվական թեժ գիծ: (661) 252-5686 • Fax (661) 252-4362

www.alamoministries.com • info@alamoministries.com

Թոնի Ալամո, Համաշխարհային Քահանա, Թոնի Ալամոյի Քրիստոնեական Առաքելությունը ԱՄՆում բնակվողների համար տրամադրում է բոլոր հարմարություններով կազարաններ, այն բոլորի համար, ովքեր իրենց ամբողջ սրտով, հոգով, մտքով և ուժով ուզում են ծառայել ԱՍՏՈՒՆ:

Նյու-Յորքում ծառայությունները անց են կցվում ամեն Երեքշաբթի ժամը 20:00-ին, իսկ այլ բնակավայրերում ամեն գիշեր:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԿԱՐՈՂ ԵՔ ՄԱՍՆԱԿՅԵԼ ԶՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ:

Խնդրում ենք զանգահարել (908) 937-5723 համարով տեղեկատվության համար:

Կարող եք ստանալ Քահանա Ալամոյի գիրքը, Մեսիան, որտեղ ներկայացվում են 333 մարգարեություններ ՔՐԻՍՏՈՍԻ մասին, որ հայտնաբերվել են Հին Կտակարանում:

Տարածեք Քահանա Ալամոյի գրականությունը և դարձեք բանվոր հոգիների բերքի հավաքման գործում:

Մեր ողջ գրականությունը և աուդիոքարոզներն անվճար են, ներառյալ փոխադրումը:

Եթե որևէ մեկը փորձի ձեզնից վճար պահանջել դրանց համար, խնդրում ենք զանգահարել անվճար այս համարի հաշվին տվյալ հեռախոսահամարով (661) 252-5686

ԱՅՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՓՐԿՈՒԹՅԱՆ ՃՇՄԱՐԻՑ ԾՐԱԳԻՐԸ (Գրծ 4:12):

ԴԵՆ ՄԻ ՆԵՏԵՔ ԱՅՆ ՓՈՒՆԱՐԵՆԸ ՓՈՒՆԱՆՑԵՔ ՄԵԿ ՈՒՐԻՇԻՆ

Նրանց, ովքեր գտնվում են այլ երկրներում, մենք քաջալերում են թարգմանել այս գրականությունը ձեր մայրենի լեզվով:

Գրականությունը վերատպելու դեպքում, խնդրում ենք ներառել հետևելյալ հեղինակային իրավունքը և գրանցումը:

© Copyright November 1995, 2012, 2013, 2014 All rights reserved World Pastor Tony Alamo ® Registered November 1995, 2012, 2013, 2014

ARMENIAN—Vol. 06000—Tony Alamo's Testimony—Dry Bones